**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/2**

**ք. Երևան** **«19» սեպտեմբեր 2017թ.**

**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմն,** ի դեմս՝ **աշխատակազմի ղեկավար Նունե Խաչատրյանի**, որը գործում է նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **< ԿԱՊԻՏԱԼ ՄՈԹՈՐՍ > ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գագիկ Նուրիջանյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոտեխսպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող **N 1 հավելվածով** սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագրից կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/2**

ք. Երևան «19» սեպտեմբեր 2017թ.

**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմն,** ի դեմս՝ **աշխատակազմի ղեկավար Նունե Խաչատրյանի**, որը գործում է նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **< ԿԱՊԻՏԱԼ ՄՈԹՈՐՍ > ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գագիկ Նուրիջանյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոտեխսպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող **N 1 հավելվածով** սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի **N 1 հավելվածում** նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված ույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (**հավելված N 3.1**) և հանձնման-ընդունման արձանագրության **2 (երկու)** օրինակ (**հավելված N 3**):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>**10 (տաս)**</u> աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **200000 (երկու հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (**հավելված N 2**) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում ...արողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն ...ատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում ...ն ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր ք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը անալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4 (չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**

**Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8**

**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

**Հ/Հ՝ 900011194132**

**[illegible]06264**

---------------------

ստորագրություն

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**<ԿԱՊԻՏԱԼ ՄՈԹՈՐՍ> ՍՊԸ**

**Հասցե՝ ք.Երևան, Ռուբինյանց 30/1**

**Բանկ՝ <Արմսվիսբանկ> ՓԲԸ**

**Հ/Հ՝ 2500010423330100**

**ՀՎՀՀ՝ 02654035**

---------------------

ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 1
« 19 » սեպտեմբերի 2017թ. կնքված
**ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/2** ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | **50111130/2** | **ՀՀ կառավարության աշխատակազմի և <Կիա Մոթորս Արմենիա> ՓԲԸ-ի միջև 13.06.2013թ. կնքված թիվ ՀՀԿԱ-ԾՀԱՊՁԲ-11/21-13/18 պայմանագրով ձեռքբերված Կիա Օպտիմա 2.4 (Kia Optima2.4) մակնիշի ավտոմեքենայի (Նույնականացման համարը՝ KNAGN412BD5400120) երաշխիքային սպասարկման շրջանակներում ավտոտեխսպասարկման ծառայությունների մատուցում՝ ըստ ստորև գնացուցակի:** | դրամ | **200000 (երկու հարյուր հազար)** | Ըստ պահանջի՝ գնացուցակին համապատասխան | ք.Երևան, Ռուբինյանց 30/1 | **Պայմանագրի կնքման օրվանից մինչև 15.12.2017թ.** |

| Հ/Հ | **Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | **Գինը /ՀՀ դրամ/** |
|---|---|---|
| 1 | առջևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/ | 60000 |
| 2 | առջևի արգելակման կոճղակների փոխարինում | 4000 |
| 3 | հետևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/ | 36000 |
| 4 | հետևի արգելակման կոճղակների փոխարինում | 4000 |
| 5 | օդի զտիչ / 1 հատ / | 9000 |
| 6 | օդի զտիչի փոխարինում | 0 |
| 7 | կայծաբաշխիչ կոճ / 1 հատ / | 25000 |
| 8 | կայծաբաշխիչ կոճի փոխարինում | 3000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 9 | վառելիքի զտիչ / 1 լիտր / կամ / 1 հատ / | 18000 | | | | | |
| | | 10 | վառելիքի զտիչի փոխարինում | 6000 | | | | | |
| | | 11 | անտիֆրիզ / 1 լիտր/ | 3800 | | | | | |
| | | 12 | անտիֆրիզի փոխարինում | 2000 | | | | | |
| | | 13 | վառոցքի մոմեր / 4 հատ / | 18000 | | | | | |
| | | 14 | վառոցքի մոմերի փոխարինում | 3000 | | | | | |
| | | 15 | փոխանցման տուփի յուղ /լիտր/ | 8500 | | | | | |
| | | 16 | փոխանցման տուփի յուղի փոխարինում | 5000 | | | | | |
| | | 17 | շարժիչի յուղ / 1 լիտր/ | 5800 | | | | | |
| | | 18 | շարժիչի յուղի փոխարինում | 0 | | | | | |
| | | 19 | շարժիչի յուղի զտիչ / 1 հատ / | 3500 | | | | | |
| | | 20 | շարժիչի յուղի զտիչի փոխարինում | 0 | | | | | |
| | | 21 | ինժեկտորի ֆարսունկաների մաքրում / 4 հատ / | 20000 | | | | | |
| | | 22 | առջևի / հետևի / անվաբացքի կարգաբերում | 14000 | | | | | |
| | | 23 | տեխ.զննում | 5000 | | | | | |
| | | 24 | համակարգչային դիագնոստիկա | 5000 | | | | | |
| | | 25 | առջևի մեղմիչ / 1 հատ / | 55000 | | | | | |
| | | 26 | առջևի մեղմիչի փոխարինում | 6000 | | | | | |
| | | 27 | հետևի մեղմիչ / 1 հատ / | 48000 | | | | | |
| | | 28 | հետևի մեղմիչի փոխարինում | 4000 | | | | | |
| | | 29 | ղեկի գնդաձև հոդակապ / 1 հատ / | 14000 | | | | | |
| | | 30 | ղեկի գնդաձև հոդակապի փոխարինում | 4000 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 31 | անվադողերի հավասարակշռում / 1 հատ / | 1000 | | | | | |
| | | 32 | կայունարարի վռան /ութնյակ / - / 1 հատ / | 16000 | | | | | |
| | | 33 | կայունարարի վռանի /ութնյակ / փոխարինում | 3500 | | | | | |
| | | 34 | դիմապակի մաքրող խոզանակ / 1 հատ/ | 14000 | | | | | |
| | | 35 | գնդաձև հոդակապ / 1 հատ / | 17000 | | | | | |
| | | 36 | գնդաձև հոդակապի փոխարինում | 4000 | | | | | |
| | | 37 | կայունարարի ռետինե վռան / 1 հատ / | 3500 | | | | | |
| | | 38 | կայունարարի ռետինե վռանի փոխարինում | 3000 | | | | | |
| | | 39 | ակումուլյատորային մարտկոց /ներառյալ փոխարինումը/ / 1 հատ / | 67000 | | | | | |
| | | 40 | ինժեկտորի ֆարսունկա / 1 հատ / | 65000 | | | | | |
| | | 41 | ինժեկտորի ֆարսունկաի փոխարինում | 10000 | | | | | |
| | | 42 | հետևի խլարարի բաք / 1 հատ / | 190000 | | | | | |
| | | 43 | հետևի խլարարի բաքի փոխարինում | 5000 | | | | | |
| | | 44 | շարժիչի բարձիկ / 1 հատ/ | 55000 | | | | | |
| | | 45 | շարժիչի բարձիկի փոխարինում | 5000 | | | | | |
| | | 46 | փոխանցման տուփի բարձիկ | 60000 | | | | | |
| | | 47 | փոխանցման տուփի բարձիկի փոխարինում | 6000 | | | | | |
| | | 48 | դիմահար լամպ / 1 հատ/ | 35000 | | | | | |
| | | 49 | դիմահար լամպի փոխարինում | 3000 | | | | | |
| | | 50 | հեռահար լամպ / 1 հատ/ | 6500 | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 51 | հեռահար լամպի փոխարինում | 1000 | | | | | |
| | | 52 | լամպ / 1 հատ/ | 800 | | | | | |
| | | 53 | լամպի փոխարինում | 0 | | | | | |
| | | 54 | վառելիքի պոմպ / 1 հատ/ | 85000 | | | | | |
| | | 55 | վառելիքի պոմպի փոխարինում | 6000 | | | | | |
| | | 56 | արգելակման համակարգի հեղուկ /լիտր/ | 6500 | | | | | |
| | | 57 | խլարարի ռետինե ամրակ / 1 հատ / | 5000 | | | | | |
| | | 58 | թերմոստատ / 1 հատ / | 10000 | | | | | |
| | | 59 | թերմոստատի փոխարինում | 5000 | | | | | |
| | | 60 | շարժիչի ջրի պոմպ / 1 հատ / | 55000 | | | | | |
| | | 61 | շարժիչի ջրի պոմպի փոխարինում | 10000 | | | | | |
| | | 64 | պոմպ՝ դիմապակին ջրով մաքրելու համար / 1 հատ / | 14000 | | | | | |
| | | 65 | դիմապակին ջրով մաքրող պոմպի փոխարինում | 3000 | | | | | |
| | | 66 | հովացման համակարգի ընդարձակման բաք / 1 հատ / | 20000 | | | | | |
| | | 67 | ընդարձակման բաքի փոխարինում | 3000 | | | | | |
| | | 68 | ընդարձակման բաքի կափարիչ / 1 հատ / | 4500 | | | | | |
| | | 69 | առջևի մեղմիչի հենարան առանցքակալով / 1 հատ/ | 16000 | | | | | |
| | | 70 | առջևի մեղմիչի հենարանի փոխարինում | 6000 | | | | | |
| | | 71 | առջևի դարձյակի առանցքակալ / 1 հատ/ | 35000 | | | | | |
| | | 72 | առջևի դարձյակի առանցքակալի | 8000 | | | | | |

| | | |
|---|---|---|
| | փոխարինում | |
| 73 | հետևի դարձյակի առանցքակալ / 1 հատ/ | 45000 |
| 74 | հետևի դարձյակի առանցքակալի փոխարինում | 8000 |
| 75 | խլարարի վերանորոգում | 15000 |
| 76 | անվադողերի վուլկանացում | 500 |
| 77 | փոխանցման տուփի հանում և տեղադրում, վերանորոգում | 85000 |
| 80 | Կցորդման սալ / 1հատ / | 40000 |
| 81 | Առջևի ծգածողի վռան / 1 հատ / | 12000 |
| 83 | ղեկի ուժեղարար / 1 հատ / | 125000 |
| 84 | ղեկի ուժեղարարի փոխարինում | 10000 |
| 88 | Դիմապակի մաքրող հեղուկ / 1 հատ / | 2500 |
| 89 | Օդորակիչի զտիչ | 13000 |
| 90 | Պարսատիկի վռան մեծ / 1 հատ / | 12000 |
| 91 | Պարսատիկի վռան մեծ փոխարինում/ 1 հատ / | 4000 |
| 92 | Պարսատիկի վռան փոքր / 1 հատ / | 10000 |
| 93 | Պարսատիկի վռան փոքր փոխարինում/ 1 հատ / | 4000 |

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**
**Ք. Երևան, [illegible] 3/8**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011194132**
**ՀՎՀՀ 02506264**
/ստորագրություն/

**ԿԱՏԱՐՈՂ**
**<ԿԱՊԻՏԱԼ ՄՈԹՈՐՍ> ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Ռուբինյանց 30/1**
**Բանկ՝ <[illegible]> ՓԲԸ**
**Հ/Հ 2500010423390000**
**ՀՎՀՀ 02654035**
/ստորագրություն/

Հավելված N 2
« 19 » սեպտեմբերի 2017թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/2 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/2 | **Ավտոտեխսպասարկման ծառայություններ** | - | - | - | - | - | - | - | - | 150000 | 200000 | 200000 | 200000 | 200000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**
**Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011194132**
**ՀՎՀՀ 02506264**

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**<ԿԱՊԻՏԱԼ ՄՈԹՈՐՍ> ՍՊԸ**
**Հասցե՝ ք.Երևան, Ռուբինյանց 30/1**
**Բանկ՝ <Արմսվիսբանկ> ՓԲԸ**
**Հ/Հ՝ 2500010423330100**
**ՀՎՀՀ 02654035**

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« 19 » սեպտեմբերի 2017թ. կնքված
ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/2 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ______________________ | հհ ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«     » «                    » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս______________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

**Հավելված 3.1**
**«_19_» սեպտեմբերի 2017թ. կնքված**
**ՀՀԱՆ-ՄԱԾՁԲ-17/2 ծածկագրով պայմանագրի**

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն